



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան

26.09.2019թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-ԼՕ-2019/141**

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Համլետ Հոլսեփյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
Մասնակցի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/167» ծածկագրով գնանշման հարցում, գրասենյակային
ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ
քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության կողմից 29.08.2019թ.-ին թիվ 26/26-1/14425-2019 գրությամբ «Համլետ
Հոլսեփյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 23.08.2019թ.-ի թիվ 01/61-16563 գրության հիման վրա, 29.08.2019թ.-ին «Համլետ Հովսեփյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 29.08.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 05.09.2019թ.-ին, 12.09.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 12.09.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.09.2019թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 23.08.2019թ.-ի թիվ 01/61-16563 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵԲ-ԳՀԱՊԶԲ-19/167» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթով, գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամույների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամույների կոմիտե:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված շեմը:

Վերոգրյալով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով, առաջարկում եմ Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ԵԲ-ԳՀԱՊՁԲ-19/167» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Համլետ Հովսեփյան» Ա/Ձ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորության առկայության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. «Համլետ Հովսեփյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 29.08.2019թ.-ին գրությամբ դիմել է «Համլետ Հովսեփյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.08.2019թ.-ի թիվ 26/26-1/14425-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 10.09.2019թ.-ին հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵԲ-ԳՀԱՊՁԲ-19/167» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 25.07.2019թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն և մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Հայտը ներկայացնելուց առաջ նույն օրը՝ 25.07.2019թ., այն է՝ 25.07.2019թ., մուտք գործելով իր <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտ>>, Ա/Ձ-ն պարզել է, որ Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն 25.07.2019թ. դրությամբ որևէ տեսակի ժամկետանց պարտավորություն

չունի: Այդ օրոքով ԱԶ կողմից կատարվել է նաև <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտ>>-ից համապատասխան արտատպում (կցվում է):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ, որին ի պատասխան տրվել է եզրակացություն, համաձայն որի Համլետ Հովսեփյան Ա/Զ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 25.07.2019թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ /664,000 ՀՀ դրամ/:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Համլետ Հովսեփյան Ա/Զ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն և որոշել է առաջնորդվել <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետով Ա/Զ-ին տրամադրել երեք աշխատանքային օր՝ անհամապատասխանությունները շտկելու համար /տես թիվ 4 արձանագրություն/:

Գնահատող հանձնաժողովի 13.08.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետով գնահատող հանձնաժողովը որոշել է Համլետ Հովսեփյան Ա/Զ-ի հայտը մերժել՝ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու հիմքով:

04.09.2019թ. Համլետ Հովսեփյան Ա/Զ-ն ՀՀ ՊԵԿ ուղղված պաշտոնական հարցմամբ (կցվում է) հայտնել է հետևյալը.

<<Համլետ Հովսեփյան Ա/Զ-ն 25.07.2019թ. մասնակցության հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարված <<ԵԲ-ԳՀԱՊԶԲ-19/167>> ընթացակարգին և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընդ որում, մասնակցության հայտ ներկայացնելուց առաջ, նույն օրը, այն է՝ 25.07.2019թ., մուտք գործելով <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտ>>, Ա/Զ-ն պարզել է, որ Համլետ Հովսեփյան Ա/Զ-ն 25.07.2019թ. դրությամբ որևէ տեսակի ժամկետանց պարտավորություն չունի:

Սակայն Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ՊԵԿ, որին ի պատասխան ստացվել է եզրակացություն, ըստ որի Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն 25.07.2019թ. օրվա դրությամբ /հայրը ներկայացնելու օր/ ունի 664,600 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն:

Այսպիսով, հենց հայրը ներկայացնելու օրը՝ 25.07.2019թ. արված/արտարարված <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքի համաձայն՝ Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն 25.07.2019թ. դրությամբ որևէ տեսակի ժամկետանց պարտավորություն չունի, իսկ համաձայն ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկանքի՝ Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն 25.07.2019թ. դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն (կցվում են):

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը՝ խնդրում ենք հայտնել.

ա. Ինչով է պայմանավորված ՀՀ ՊԵԿ-ի 09.08.2019թ. տրամադրված տեղեկանքի և <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> 25.07.2019թ. արտարարված քաղվածքի միջև առկա տեղեկատվությունների անհամապատասխանությունը:

բ. Ինչի արդյունքում է առաջացել Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ի մոտ 25.07.2019թ. օրվա դրությամբ 664,600 ՀՀ դրամի ժամկետանց պարտավորությունը:

գ. Արդյոք, երբ Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն 25.07.2019թ մասնակցության հայտ է ներկայացրել, առաջնորդվել է <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքում հրապարակված տեղեկատվությունից, որտեղ ժամկետանց պարտավորություն առկա չի եղել, կարող էր 25.07.2019թ. տեղյակ լինել հետագայում առաջացած՝ բայց արդեն 25.07.2019թ. դրությամբ արտացոլված հարկային պարտավորության մասին:

Հարցի հրապարակությունից ելնելով՝ խնդրում ենք պատասխանը ներկայացնել հնարավորինս սեղմ ժամկետում՝ նաև սույն գրությամբ ներկայացված էլեկտրոնային հասցեին>>:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայրը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պարավիրարույի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն 25.07.2019թ. դրությամբ /հայտը ներկայացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 664,000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ հայտը ներկայացնելու օրը <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքի համաձայն՝ Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն 25.07.2019թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չի ունեցել (կցվում է): Եվ պետք է նշել, որ Ա/Ձ-ն հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> տվյալները, ըստ որի՝ Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /25.07.2019թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունեն:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը՝ Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն 04.09.2019թ. հարցում է ներկայացրել ՀՀ ՊԵԿ, որով խնդրել է հայտնել.

ա. Ինչով է պայմանավորված ՀՀ ՊԵԿ-ի 09.08.2019թ. տրամադրված տեղեկանքի և <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> 25.07.2019թ. արտատրված քաղվածքի միջև առկա տեղեկատվությունների անհամապատասխանությունը:

բ. Ինչի արդյունքում է առաջացել Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ի մոտ 25.07.2019թ. օրվա դրությամբ 664,600 ՀՀ դրամի ժամկետանց պարտավորությունը:

գ. Արդյոք, երբ Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն 25.07.2019թ մասնակցության հայտ է ներկայացրել, առաջնորդվել է <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքում հրապարակված տեղեկատվությունից, որտեղ ժամկետանց պարտավորություն առկա չի եղել, կարող էր 25.07.2019թ. տեղյակ լինել հետագայում առաջացած՝ բայց արդեն 25.07.2019թ. դրությամբ արտացոլված հարկային պարտավորության մասին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնում ենք, որ մինչ օրս ՀՀ ՊԵԿ-ի կողմից չի ստացվել վերը նշված հարցմանը պատասխանը՝ ստանալուն պես այն կներակայացնենք բողոքներ քննող անձին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք հաշվի առնել, որ Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն 25.07.2019թ մասնակցության հայտ է ներկայացրել՝ առաջնորդվելով <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքում հրապարակված տեղեկատվությունը՝ որտեղ ժամկետանց պարտավորություն առկա չի եղել և այդ պարտավորության մասին տեղեկացել է միայն գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ ՊԵԿ կատարված հարցման արդյունքում:

Այս պարագայում գտնում ենք, որ առկա է ՀՀ ՊԵԿ-ի անփութ և անհետևողական աշխատանքի արդյունք, որի արդյունքում առկա է ՀՀ ՊԵԿ-ի 2 փաստաթղթերի տեղեկատվությունների անհամապատասխանությունը, հանձինս՝ տեղեկանքի և <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքի: Այլ կերպ ասած, Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն 25.07.2019թ մասնակցության հայտ ներկայացնելից, առաջնորդվել է <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքում հրապարակված տեղեկատվությունից, որտեղ ժամկետանց պարտավորություն առկա չի եղել, և բնականաբար, չէր կարող այդ օրը՝ 25.07.2019թ. տեղյակ լինել հետագայում առաջացած՝ բայց արդեն 25.07.2019թ. դրությամբ արտացոլված հարկային պարտավորության մասին:

Գտնում ենք, որ նշված պայմաններում Համլետ Հովսեփյան Ա/Ձ-ն չի խախտել գնման գործընթացի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորություն, քանի որ տալով

հայտարարություն, որ չունի որևիցե ժամկետանց պարտավորություն՝ առաջնորդվել է իրեն հասանելի <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> տեղեկավորությամբ:

Ի լրումն 10.09.2019թ.-ի գրության, Մասնակիցը 18.09.2019թ.-ի գրությամբ հայտնել է հետևյալը.

«12.09.2019թ. թիվ ՍՑ-ԼՕ-2019/141 ընթացակարգի հիմքերի քննության վերաբերյալ նշանակված նիստի քննության ընթացքում Ձեր կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ հայտնում ենք, որ արձանագրված անհամապատասխանության շտկման փուլում Ա/Ձ Համլետ Հովսեփյանի ներկայացուցիչը զանգահարել է Երևանի քաղաքապետարանի գնումների վարչության աշխատակցին և տեղեկացրել, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ իր մոտ առկա է <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածք, որտեղ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ որևէ տեսակի պարտավորություն առկա չի եղել, սակայն աշխատակիցը պատասխանել է, որ վերոհիշյալ քաղվածքը հիմք չէ հայտը բավարար գնահատելու համար:

Միևնույն ժամանակ ներկայացնում ենք 17.09.2019թ. կատարված <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքները 24.07.2019թ., 25.07.2019թ., 26.07.2019թ. դրությամբ /կցվում են/, և խնդրում ենք ուշադրություն դարձնել շատ կարևոր հանգամանքի վրա, այն է՝ 25.07.2019թ. տպագրված <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքի համաձայն՝ Ա/Ձ Համլետ Հովսեփյանը նույն 25.07.2019թ. դրությամբ /հայտը ներկայացնելու օր/ որևէ տեսակի պարտավորություններ չունի, իսկ արդեն 17.09.2019թ. տպագրված <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքի համաձայն՝ Ա/Ձ Համլետ Հովսեփյանը արդեն նույն օրը՝ 25.07.2019թ. դրությամբ ունի 664 600 ՀՀ դրամի պարտավորություն՝ 478 600 ՀՀ դրամի տույժ եկամտահարկի գծով և 186 000 դրոշմանիշային վճարի գծով:

Միևնույն ժամանակ բողոքներ քննող անձին խնդրում ենք ուշադրություն դարձնել նաև ՀՀ ՊԵԿ-ի կողմից 17.09.2019թ. տրամադրված թիվ /70-15/56271-2019 գրության բովանդակությանը, որտեղ փաստվում է, որ եկամտահարկի գծով տույժը առաջացել է հարկային մարմին ներկայացրած 2018թ. փետրվար, մարտ և հուլիս ամիսներին եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ճշգրտված հաշվարկներ 25.07.2019թ. ներկայացնելու արդյունքում, հետևաբար հենց այս փաստով էլ պայմանավորված Ա/Ձ Համլետ Հովսեփյանը 25.07.2019թ.՝ հայտ ներկայացնելուց առաջ <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքը ստուգելով և տպելով՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից չի

արձանագրվել որևէ տեսակի հարկային պարտավորություն, քանի որ ՀՀ ՊԵԿ-ի 17.09.2019թ. գրության համաձայն՝ վերը նշված տույժը առաջացել է միայն 25.07.2019թ. կատարված ճշգրտման հետևանքով և դրա արդյունքում, ու հետագայում է արտացոլվել <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքում որպես 25.07.2019թ. առկա պարտավորություն: Իսկ նույն 17.09.2019թ. գրությամբ նաև ՀՀ ՊԵԿ-ը հաստատել է նաև, որ առկա 186,000 ՀՀ դրամ պարտավորությունը՝ դրոշմանիշային վճարի գծով <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքում 25.07.2019թ. արտացոլված չի եղել:

Խնդրում ենք նաև հաշվի առնել, որ ՀՀ ՊԵԿ-ի կողմից չի տրամադրվել տեղեկատվություն, թե 25.07.2019թ. կատարված ճշգրտման հետևանքով առաջացած եկամտահարկի գծով տույժը կոնկրետ որ օրն է արտացոլվել ԱԶ-ի <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտում>>, ինչը թույլ է տալիս եզրահանգելու, որ այն արտացոլվել է ոչ 25.07.2019թ., քանի որ հենց ՀՀ ՊԵԿ-ը իր գրությամբ հայտնել է, որ 25.07.2019թ. ներկայացված ճշգրտման հետևանքով ՀՀ ՊԵԿ-ի կողմից կատարվել են վերահաշվարկներ և հաշվարկվել են տույժեր:

Ինչ վերաբերում է ՀՀ ՊԵԿ-ի այն պնդմանը, որ վերոհիշյալ պարտավորությունը տեսանելի է Ա/Ձ Համլետ Հովսեփյանի <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտում>>, ապա այս կապակցությամբ հայտնում ենք, որ այդ, ներկայումս այդ պարտավորությունը տեսանելի է, սակայն նշվածը չի նշանակում, որ այդ պարտավորությունը տեսանելի է եղել ԱԶ համար հենց 25.07.2019թ.՝ հայտը ներկայացնելու օրը:

Բողոքներ քննող անձին նաև խնդրում են նկատի ունենալ, որ 17.09.2019թ. տպագրված <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքի համաձայն՝ Ա/Ձ Համլետ Հովսեփյանի մոտ 26.07.2019թ. դրությամբ արտացոլված չէ որևիցե տույժի գումար եկամտահարկի գծով, ինչը նույնպես ապացուցում է, որ տվյալ պարտավորությունը առաջացել է միայն 25.07.2019թ. կատարված ճշգրտման հետևանքով և նոր միայն հետագայում արտացոլվել է <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքում:

Ելնելով վերը նշված փաստերից և փաստական հանգամանքներից, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ ՊԵԿ-ի կողմից 17.09.2019թ. գրությունը՝ գալիս ենք այն եզրահանգմանը, որ Ա/Ձ Համլետ Հովսեփյանը 25.07.2019թ. հայտ է ներկայացրել <<ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/167>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին՝ հիմք ընդունելով 25.07.2019թ. <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքում արտացոլված տեղեկատվությունը, ըստ որի Ա/Ձ Համլետ Հովսեփյանը որևէ տեսակի պարտավորություն

չի ունեցել, սակայն հայտը ներկայացնելուց հետո՝ նույն 25.07.2019թ. հարկային մարմին է ներկայացվել 2018թ. փետրվար, մարտ և հուլիս ամիսներին եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ճշգրտված հաշվարկներ, որոնց արդյունքում ՀՀ ՊԵԿ-ի կողմից վերահաշվարկ կատարելիս առաջացել է եկամտահարկի գծով տույժը, որը սակայն <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքում արտացոլվել է հայտը ներկայացնելուց հետո:

Այն փաստը, որ հայտը ներկայացնելու օրվանից հետո <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքում հետադարձ ուժով առաջացել են որոշակի պարտավորություններ՝ փաստվում է նաև այն հանգամանքով, որ համաձայն 25.07.2019թ. տպագրված քաղվածքի չի արտացոլվել ոչ միայն ճշգրտման արդյունքում առաջացած տույժը, այլ նաև դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունը, որը 17.09.2019թ. տպագրված քաղվածքով արտացոլվում է 186,000 ՀՀ դրամ պարտավորությունը՝ մինչդեռ ՀՀ ՊԵԿ-ը 17.09.2019թ. գրությամբ նույնպես փաստել է, որ դրոշմանիշային վճարի գծով <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքում արտացոլված չի եղել:»:

Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Համլետ Հովսեփյան» Ա/Զ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. ՍՑ-ԼՕ-2019/141 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար գրասենյակային ապրանքների ձեռքբերման նպատակով 19.07.2019թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/167» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 25.07.2019թ.-ին հայտ է ներկայացրել միայն «Համլետ Հովսեփյան» Ա/Զ-ն:

Մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու մասին ներկայացրած դիմում-հայտարարությամբ, Մասնակիցը հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵԲ-ԳՀԱՊՁԲ-19/167» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 01.08.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Համլետ Հովսեփյան» Ա/Ձ-ն թիվ 4-րդ, 16-րդ և 27-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցման արդյունքում պարզվել է, որ «Համլետ Հովսեփյան» Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու (25.07.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 664 600 (վեց հարյուր վաթսունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովի 07.08.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է ծանուցել առաջին տեղ զբաղեցնող մասնակից՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից Armeps.am հակակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցում է ուղարկվել Մասնակցի director@omk.am էլեկտրոնային փոստի հասցեին՝ արձանագրված անհամապատասխանությունը շտկելու մասին:

Հանձնաժողովի 13.08.2019թ.-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ սահմանված ժամկետում Մասնակցի կողմից չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, հետևաբար հանձնաժողովի կողմից վերջինիս հայտը մերժվել է:

ՀՀ ՊԵԿ ՀՎՍ վարչության սպասարկման թիվ 5 բաժնի կողմից 09.08.2019թ.-ին տրված թիվ 5214 տեղեկանքի համաձայն՝ «Համլետ Հովսեփյան» Ա/Ձ-ն 25.07.2019թ.-ի դրությամբ ունեցել է 664 600 ՀՀ դրամ գումարի չափով հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն, որից 478 600 ՀՀ դրամը՝ եկամտային հարկի, իսկ 186 000 ՀՀ դրամը՝ դրոշմանիշային վճարների գծով:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 25.07.2019թ.-ի դրությամբ «Համլետ Հովսեփյան» Ա/Ձ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների, միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքի համաձայն՝ Մասնակիցը չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ի պատասխան Բողոքներ քննող անձի 16.09.2019թ.-ին թիվ /ԲՔԱ/2/15397-2019 գրության, ՀՀ ՊԵԿ-ը 17.09.2019թ.-ի թիվ /70-15/56271-2019 գրությամբ հայտնել է, որ «Համլետ Հովսեփյան» Ա/Ձ-ն /ՀՎՀՀ 55807352/ 25.07.2019թ.-ին հարկային մարմին է ներկայացրել 2018թ.-ի փետրվար, մարտ և հուլիս ամիսների եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ճշգրտված հաշվարկներ, որոնցով հայտարարագրվել է համապատասխանաբար՝ 166,996 դրամի, 464,000 դրամի և 416,000 դրամի չափով եկամտային հարկի լրացուցիչ գումար, ընդամենը՝ 1,046,996 դրամ, որի արդյունքում ՀՀ հարկային օրենսգրքի 319-րդ հոդվածի համաձայն եկամտային հարկի անձնական հաշվի քարտում կատարվել է վերահաշվարկ, հաշվառվել է 258,368 դրամի չափով տույժ: Անհատ ձեռնարկատիրոջ կողմից ներկայացված հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում արտացոլված չէ դրոշմանիշային վճարի գծով առկա պարտավորությունը, որը 25.07.2019թ.-ի դրությամբ կազմում է 186,000 դրամ:

Նույն գրությամբ ՀՀ ՊԵԿ-ը տեղեկացրել է նաև, որ 25.07.2019թ.-ին հարկային մարմին ներկայացված 2018թ.-ի փետրվար, մարտ և հուլիս ամիսների եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ճշգրտված հաշվարկների արդյունքում առաջացած հարկային պարտավորությունները Մասնակիցը ցանկացած պահի դրությամբ կարող է տեսնել էլեկտրոնային կառավարման համակարգի իր անձնական գրասենյակ էջում:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 29.08.2019թ.-ին թիվ 26/26-1/14425-2019 գրությամբ «Համլետ Հովսեփյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիստուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

(այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում

նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ հոդվածների դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին: Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ՊԵԿ հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ: Եթե ՀՀ ՊԵԿ կողմից ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների

գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հանձնաժողովի քարտուղարը կրկին անգամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կողմից գրասենյակային ապրանքների ձեռքբերման նպատակով 19.07.2019թ.-ին հայտարարված «ԵԲ-ԳՀԱՊՁԲ-19/167» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով 25.07.2019թ.-ին հայտ է ներկայացրած «Համլետ Հովսեփյան» Ա/Ձ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից՝ թիվ 4-րդ, 16-րդ և 27-րդ չափաբաժինների մասով:

Մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու մասին ներկայացրած դիմում-հայտարարությամբ, Մասնակիցը հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵԲ-ԳՀԱՊՁԲ-19/167» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին:

Պարզվել է, որ «Համլետ Հովսեփյան» Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու (25.07.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 664 600 (վեց հարյուր վաթսուհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով, ինչով պայմանավորված որոշում է կայացվել ծանուցել առաջին տեղ զբաղեցնող մասնակից՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Սակայն սահմանված ժամկետում Մասնակցի կողմից չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, հետևաբար հանձնաժողովի կողմից վերջինիս հայտը մերժվել է:

ՀՀ ՊԵԿ ՀՎՍ վարչության սպասարկման թիվ 5 բաժնի կողմից 09.08.2019թ.-ին տրված թիվ 5214 տեղեկանքի համաձայն՝ «Համլետ Հովսեփյան» Ա/Ձ-ն 25.07.2019թ.-ի

դրությամբ ունեցել է 664 600 ՀՀ դրամ գումարի չափով հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն, որից 478 600 ՀՀ դրամը՝ եկամտային հարկի, իսկ 186 000 ՀՀ դրամը՝ դրոշմանիշային վճարների գծով:

ՀՀ ՊԵԿ-ի 17.09.2019թ.-ի թիվ /70-15/56271-2019 գրության համաձայն՝ «Համլետ Հոլսեփյան» Ա/Ձ-ն /ՀՎՀՀ 55807352/ 25.07.2019թ.-ին հարկային մարմին է ներկայացրել 2018թ.-ի փետրվար, մարտ և հուլիս ամիսների եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ճշգրտված հաշվարկներ, որոնցով հայտարարագրվել է համապատասխանաբար՝ 166,996 դրամի, 464,000 դրամի և 416,000 դրամի չափով եկամտային հարկի լրացուցիչ գումար, ընդամենը՝ 1,046,996 դրամ, որի արդյունքում ՀՀ հարկային օրենսգրքի 319-րդ հոդվածի համաձայն եկամտային հարկի անձնական հաշվի քարտում կատարվել է վերահաշվարկ, հաշվառվել է 258,368 դրամի չափով տույժ: Անհատ ձեռնարկատիրոջ կողմից ներկայացված հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում արտացոլված չէ դրոշմանիշային վճարի գծով առկա պարտավորությունը, որը 25.07.2019թ.-ի դրությամբ կազմում է 186,000 դրամ:

Նույն գրությամբ տեղեկացվել է նաև, որ 25.07.2019թ.-ին հարկային մարմին ներկայացված 2018թ.-ի փետրվար, մարտ և հուլիս ամիսների եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ճշգրտված հաշվարկների արդյունքում առաջացած հարկային պարտավորությունները Մասնակիցը ցանկացած պահի դրությամբ կարող է տեսնել էլեկտրոնային կառավարման համակարգի իր անձնական գրասենյակ էջում:

Ինչ վերաբերում է «Համլետ Հոլսեփյան» Ա/Ձ-ի հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 25.07.2019թ.-ի դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու հանգամանքին, ապա Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ՀՀ ՊԵԿ-ի 17.09.2019թ.-ի թիվ /70-15/56271-2019 գրությունը, փաստում է, որ Մասնակցի մոտ ժամկետանց հարկային պարտավորություններն առաջացել են իր սեփական գործողությունների արդյունքում, այն է՝ Մասնակիցը 25.07.2019թ.-ին հարկային մարմին է ներկայացրել 2018թ.-ի փետրվար, մարտ և հուլիս ամիսների եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ճշգրտված հաշվարկներ, որոնցով հայտարարագրվել է համապատասխանաբար՝ 166,996 դրամի, 464,000 դրամի և 416,000 դրամի չափով եկամտային հարկի լրացուցիչ գումար, ընդամենը՝ 1,046,996 դրամ, որի արդյունքում ՀՀ հարկային օրենսգրքի 319-րդ հոդվածի համաձայն եկամտային հարկի անձնական հաշվի քարտում կատարվել է վերահաշվարկ, հաշվառվել է 258,368 դրամի չափով տույժ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին համապատասխանության մասին հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ներկայացնելով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին համապատասխանության մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Համլետ Հոլսեփյան» Ա/Ձ-ն Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով համապատասխանության շտկումներ՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.08.2019թ.-ին թիվ 26/26-1/14425-2019 գրությամբ «Համլետ Հովսեփյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Համլետ Հովսեփյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**

A handwritten signature in blue ink is written over a circular official stamp. The stamp contains the coat of arms of the Republic of Armenia and text in Armenian and English. The signature is a stylized, cursive script.

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ